«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Համաշխարհային պատմություն առարկայի դասավանդումը 8-9-րդ դասարաններում
ԱՌԱՐԿԱ	Նոր դարեր՝ 8-րդ դասարան Նորագույն պատմություն՝ 9-րդ դաս
ՀԵՂԻՆԱԿ	Խաչատրյան Մանուկ
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Նիգավանի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

Մաս առաջին
Ընդհանուր դրույթներ

1. Առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները.....4

2.Նոր դարերի և Նորագույն պատմության դասագրքերի առանձնահատկություններ.....5

Մաս երկրորդ
Դասավանդման մեթոդիկա

3.Սովորողների գիտեիքների ձևավորումը պատմության ուսուցման ընթացքում.....8

4.Դասավանդման համար առաջարկվող մեթոդներ, հնարներ, վարժություններ.....12

Եզրակացություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ 21

Ներածություն

Համաշխարհային պատմության նոր և նորագույն շրջանի դասընթացը կարևոր դեր ունի հանրակրթության սովորողների մտավոր զարգացման և դաստիարակության գործում: Դասընթացը նպաստում է նրանց վերլուծական մտածողության զարգացմանը, մտահորիզոնի ընդլայմանը և աշխարհայացքի ձևավորմանը: Գլխավոր փաստերի և իրադարձությունների յուրացումը, դարակազմիկ գաղափարների, հասկացությունների և մշակութային նվաճումների հետ ծանոթությունը օգնում են նրանց կողմնորոշվելու և դառնալու մեր երկրի գիտակից և արժանավոր քաղաքացիներ:

Նոր պատմության դասընթացի նպատակն է սովորողներին պատկերացում տալ արդյունաբերական կամ ինդուստրիալ հասարակության ձևավորման և զարգացման մասին: Դասընթացի կարևորոգույն խնդիրներից մեկը սովորողներին գիտելիքներ տալը և արդյունաբերական հասարակոության քաղաքակրթական արժեքներին ծանոթացնելն է: «Նոր դարեր» դասընթացը 8-րդ դասարանում սկսվում է 17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը և ավարտվում Առաջին համշխարհային պատերազմով: Այն իր մեջ ներառում է երկու շրջափուլ՝ արդյունաբերական հասարակության ձևավորումը 17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը և զարգացած արդյունաբերական երկրները և աշխարհը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբը:

Նորագույն պատմությունը 9-րդ դասարանում սկսում է Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաքաղաքական արդյունքների ամփոփումով և շարունակվում մինչև մեր օրերը: Դասագրքի երեք բաժիններում տրված են արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլը, սառը պատերազմը և աշխարհը 1991 թ-ից հետո:

Դասընթացի ուսումնադաստիարակչական խնդիրները հաջողությամբ լուծելուն նպաստում են մեթոդական խորհուրդները, լրացուցիչ նյութերը, օրինակելի թեմատիկ պլանը և գրականության ցանկը:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ

Հանրակրթական դպրոցում համաշխարհային պատմության դասավանդման նպատակներն են.

1. համաշխարհային պատմական գործընթացի բազմազանության ու միասնականության, պատմական կարևոր օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների յորացումը,

2. առանձին տարածաշրջանների ու երկրների հասարակության զարգացման այն պատմական առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռական դեր են խաղացել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման գործում,

3. սովորողների մոտ անհատական համոզմունքի ձևավորում՝ աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների հիման վրա։

Ելնելով վերը նշվածներից պատմություն առարկայի դասավանդման ընթացքում առաջնային են համարվում հետևյալ խնդիրները.

1. սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների, երևույթների, գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ,

2. սովորողների մոտ ուսումնասիրվող նյութի նկատմամբ առաջացնել հետաքրքրություն, որը անհրաժեշտ կլինի պատմություն առարկայից ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու դեպքում,

3.նպաստել սովորողի՝ անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, որը գիտակցում է հիմնարար արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության մակարդակի բարձրացմանը,

4.սովորեցնել գտնել պատճառահետևանքային կապեր պատմական գործընթացներում, հասկանալ ու բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման յուրահատկությունները, դրանք պայմանավորող գործոնները,

5.հետևողականորեն կիրառել միջառարկայական կապ և զուգահեռների անցկացում. սա ըստ էության հիանալի միջոց է դասավանդվող նյութը տպավորելու և ավելի խորը ընկալելու համար։

2.ՆՈՐ ԴԱՐԵՐ և ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՐՈՒՆՆԵՐԸ

Նոր և նորագույն պատմություն դասագրքերի հիմքում ընկած է արդյունաբերական հասարակության, ազգային պետությունների ձևավորման և զարգացման գործընթացը, ժամանակակից աշխարհի զարգացման ուղությունները։

Պետությունը՝ որպես ազգերի և ժողովուրդների կյանքի կազմակերպման միջոց և հասարական դաշինքի դրսևորում, դառնում է գլխավոր գաղափարը թեմաների մեծ մասի ուսուցման ընթացքում։ Շեշտվում է ոչ միայն պետության դերի համամարդկային արժևորումը, այլ նրա նոր բովանդակությունը և դերը արդյունաբերական և հետարդյունաբերական հասարակության ձևավորման գործընթացում։ Հենց այդ պատճառով էլ առաջնային է դառնում պետական կառուցվածքի և ժողովրդավար, նաև քաղաքացիական հասարակության ձևավորման պատմական ընթացքի ուսուցումը։ Նկատի ունենալով տնտեսական առաջընթացի և զարգացման բարդությունը՝ ուսոուցման այս փուլում դասերը ներկայացված են ավելի ամփոփ և ընդհանուր։

Մարդու սոցիալական և ազգերի ազատագրության հիմնախնդիրները դասագրքի առաջնային հայեցակետերից մեկն է։ Սոցիալական պետության ձևավորման երկարատև պատմական պրոցեսները դիտարկվում են այս տեսանկյունից։

Բուրժուական հեղափոխությունները դիտվում են, որպես արդյունաբերական հասարակության կայացման ճանապարհին ընկած խոչընդոտների բռնի վերացման սոցիալական պայթյուններ։ Հեղափոխական իրադրության առաջացման և հեղափոխությունների պատճառների, առիթի և հետևանքների մասին մոտեցումներում ակնառու է թեմաների ընտրության հետևողականությունը, մասնավորապես՝ լուսավորականությունը, որպես հեղափոխության նախապատրաստություն, ազատությունները և օրեքը՝ անխախտելի իրավունք։

Ցույց է տրված, որ հեղափոխությոնների, որպես հասարակության վերափոխման միջոցի հետևանքները նույնքան դառն են, որքան ընթացքը։ Ֆրանսիացի նշանավոր գրող Վիկտոր Հյուգոն «Թշվառները» վեպում գրում է. «թշվառությունը հեղափոխությունների և պատճառ է և հետևանք»։

Միևնույն ժամանակ արդյունաբերական հասարակությունը ներկայացված է բնականոն ընթացքով դեպի առաջադիմություն և զարգացում ու կատարելագործում ընթացող, սոցիալական հակամարտությունները հարթելու ընդունակ մի ամբողջություն։

Ազգային ազատագրության և ազգերի դերի իմաստավորումը կազմում է դասագրքերի առանցքային գաղափարներից մեկը։ Դասագրքերում կարևորված են հասարակության ճգնաժամային իրադրությունները, մասնավորապեսայդ տեսանկյունից է ներկայացված Առաջին համաշխարհային պատերազմը։ ՍՍՀՄ-Ի և Արևմուտքի քաղաքակրթական նոր արժեքների ստեղծման փորձերի պատմությունը նույնպես պետք է դիտարկել այդ առումով։ ՍՍՀՄ-ի, ֆաշիստական Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի օրինակներով ցույց է տրված ամբողջատիրական վարչակարգերի առաջացման և անկման ընթացքը։

Նոր և նորագույն պատմության դասագրքերում տեղ են գտել նաև Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի տվյալ ժամանկահատվածում պատմական առաջնային դեր ունեցող երկրների պատմությունը, ինչպես նաև միջազգային գլխավոր իրադարձություններն ու գործընթացները: Դրանք այն երկրներն ու ազգերն որոնք արդյունաբերական հասարակության ձևավորման և զարգացման ընթացքում պատմականորեն կարողացան իրենց ետևից տանել աշխարհը: Այդպիսի հանդիսանում են Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, ՍՍՀՄ-ը և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Գլխավոր իրադարձությունների թվին են դասվում արդյունաբերական հասարակության, շուկայական հարաբերությունների և տնտեսության, ինչպես նաև համաշխարհային շուկայի ձևավորումը, Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմները, Վերսալ-վաշինգտոնյան համակարգի ստեղծումը, գաղութային համակարգի փլուզումը և այլն: Ուշադրության է արժանի նաև միջազգային հարաբերությունների վերլուծությունը: Կարևորվել է նաև համաշխարհային պատմության մեջ հայերի դերը, այլ երկրների հետ առնչությունների ուսուցումը: Մասնավորապես զգալի տեղ է տրվել Օսմանյան կայսրության, Իրանի և Ռուսաստանի պատմությանը: Հայերի առնչությունները դասագրքում ներկայացված են հակիրճ և հետևողական: Ուսումնական նյութը շարադրված է մատչելի, հաշվի է առնված 8-9-րդ դասարաններում սովորողի՝ նյութը ընկալելու և վերլուծելու կարողունակությունը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍԱՎԱՆԱԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

1.Սովորողների գիտելիքների ձևավորումը պատմություն առարկայի ուսուցման ընթացքում

1.1 *Սովորողների ճանաչողական գործունեությունը*

Պատմություն առարկայից գիտելիքների յուրացումն իրականացվում է սովորողների բազմակողմանի, ակտիվ և ստեղծագործական գործունեության ընթացքում:

Պտմության ճանաչողության հիմքում ընկած են զգացմունքները և ընկալումները, մեծ մասամբ՝ տեսողական և լսողական: Պատմական իրադարձություններին, երևույթների մասին գիտելիքները վերցվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից: Տեղեկության ստացումը ոչ միայն պարտադիր է, այլ նաև համարվում է ուսումնական ճանաչողական սկզնական փեուլը: Պատմության ուսուցման ճանաչողական գործընթացում մեծ տեղ են զբաղեցնում առարկայական և պատկերավոր կամ արտահայտչական զննականությունը, քարտեզները, փաստաթղթերը: Մեծ է նաև նկարագրության և պատմելու դերը:

Սովորորողների կողմից փաստական գիտելիքների յուրացման ընթացքը շաղկապվաց է այն ըմբռնելուն. այն գիտելիքների ուղղակի փոխանցում չէ, որի ընթացքում ակտիվ է միայն ուսուցիչը: Պատմական փաստերը կարող են յուրացվել միայն սովորողների մտագործունեության ընթացքում:

Բնույթով տարբեր գիտելիքներ սերտորեն համագործակցում են, հասկացությունների ձևավորումը հենվում է միայն փաստերի և կոնկրետ պատկերների իմացության վրա: Պտմության ճանաչողության ընթացքում սովորողի

միտքը շարժվում է որոշակիից ընդհանուրը, ընդհանուրից որոշակին, բայց հասկացությունների գիտակցման ավելի բարձր մակարդակով։Այդ հիմքի վրա յուրացվում են նոր փաստեր, իսկ նախորդները վերաիմաստավորվում են։ Դա սսովորողների մտավոր զարգացման և պատմական գիտելիքների ընկալման փուլն է ։

Ուսուցման ընթացքում բարձրանում է սովորողների՝ պատմության ուսանելիությունը։ Հոգեբանության ու մանկավարժության տեսանկյունից ուսանելիությունընը սովորողի կողմից գիտելիքների յուրացման կարողունակությունն է, այն կախված է սովորողի ընդհանուր զարգացվածությունից, գիտելիքների պաշարից և համակարգվածությունից, ճանաչողական գործունեության միջոցների տիրապետումից։

Սովորողների ուսումնական գործունեության ղեկավարումը

Պատմության ուսուցման արդյունավետությունը կախված է ուսումնական գործընթացի ղեկավարումից: Այն է.

1.Սովորողների ճանաչողական գործունեության ապահովումը պատ մական գիտելիքների աղբյուրներով: Կարևոր աղբյուրներից մեկն ուսուցչի կողմից նյութի շարադրումն է։ Աղբյուրների համապատասխան ընտրությունը պարտադիր պայման է ոչ միայն պատմական նյութի յու րացման, այլև նրանց մոտ ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորման համար (տարբեր աղբյուրներով):

2.Սովորողների մեջ նյութի ուսումնասիրման հանդեպ հոգեբանական տրամադրվածության առաջացում, ձանաչողական ակտիվության և հե տաքրքրության խթանում, ուշադրության կենտրոնացում: Կախված ուսումնասիրվող նյութից՝ այդ խնդիրները լուծվում են տարբեր միջոցնե րով՝ տպավորիչ պատմելու, գիտելիքի այլ հետաքրքիր աղբյուրների ներգրավմամբ, ինքնուրույն լուծում պահանջող հիմնահարցի առա ջադրմամբ և այլն։ ժամա արարաք

3.Սովորողների կողմից նյութի ընկալման գործընթացի անմիջական ղեկավարում, պարտադիր յուրացման ենթակա գլխավորի առանձնա ցում։

4.Պատմության ճանաչողական գործընթացի բոլոր փուլերում սովորող ների մտածողության ղեկավարում նոր նյութի հաղորդման, սկզբնական ամրապնդման, տնային աշխատանքի կատարման, կրկնողության ժամա նակ: Մտածողության ղեկավարումը պատմության ուսուցման ընթացքում իրականացվում է փաստերի անմիջական բացատրման միջոցով:

5.Գիտելիքների ամրապնդման կազմակերպում և ղեկավարում. դա սերի և տնային աշխատանքների կատարման ժամանակ իրականաց վում է՝ կողմնորոշելով սովորողներին հիշելու և վերարտադրելու նյութը: Գիտելիքների ամրապնդման կարևոր գործոն է բազմակողմանի կապե րի հաստատումը (փաստերի, հասկացությունների, թվերի) և այլն:

6.Ուսումնական գործունեության արդյունքների ստուգումը և ուղղոր դումն ընդգրկում են ոչ միայն սովորողների կողմից գիտելիքների յուրա ցումը, պատմական նյութի հետ աշխատելու միջոցների տիրապետումը, գործնականում գիտելիքների կիրառման ունակությունը:

Սովորողների ուսումնական գործունեության կազմակերպիչը և ղե կավարն ուսուցիչն է: Ընդ որում՝ մեծ նշանակություն ունի ուսուցչի ազ դեցությունը սովորողների վրա:

Պարկերավորությունը, խոսքը, պայմանական նշանները պարմության ուսուցման ընթացքում

Պատմական գիտելիքների ձևավորումն իրականացվում է ստացվող տեղեկության և ունեցած գիտելիքների համադրման միջոցով:

Պատմական փաստերի և պատմության ընթացքի ճանաչողության համար մեծ է պատկերավոր զննականության դերը՝ որպես տեղեկու թյան փոխանցման միջոց: Պատկերային զննականությունը կարևոր է նյութի ձևավորման և հիշողության մեջ ամրապնդելու համար. աշխա տանքային գործիքներ, հագուստ, զենք... Պատկերային

զննականու թյունը ծառայում է հիմնական և անփոխարինելի միջոց Ճարտարապե տական կոթողների, կերպարվեստի մասին գիտելիքների ձևավորման գործում: Տեսողական պատկերները մոտեցնում են սովորողներին պատմական իրականությանը: Սակայն չի կարելի ծանրաբեռնել սովո րողներին պատկերավոր զննականությամբ: Խոսքը կարող է լինել բովանդակության ավելի տարողունակ կրող, քան պատկերային զննականությունը:Գրավոր ու բանավոր խոսքը ոչ միայն տեղեկության փոխանցման, այլև մտածողության միջոց է:

Մեթոդիկայում հաճախ օգտագործվում են «կենդանի պատմվածք», «կենդանի նկարագրություն» արտահայտությունները: Իսկապես, կարե լի է պատմական նկարներ ստեղծել բառերով:

Պատմության ուսուցման ժամանակ խոսքի և պատկերների հետ մեկ տեղ տեղեկության փոխանցման միջոց են ծառայում պայմանական նշանները: Պայմանական նշանները բնության և հասարակության մա սին գիտելիքների ամփոփ կրողներ են, որոնք հատկապես կիրառվում են քարտեզագրական ձեռնարկներում: Պայմանական նշաններ են նաև գծերը, ուղղանկյունները և այլ նշաններ:

Գրավոր և բանավոր խոսքի ուժեղ և թույլ կողմերը

Չնայած ուսումնական ձեռնարկների բազմազանությանը՝ պատմու թյան ուսուցման գործում բանավոր շարադրանքը պահպանում է իր կարևոր նշանակությունը: Դրա առավելությունները լավ է բնութագրել Լունաչարսկին. «Մարդկային խոսքը զորեղ է: Սակայն կենդանի խոսքը, հնչող բառն ավելի ուժեղ են, քան տպագիրը: Այն հարուստ է հնչերանգի բազմազանությամբ, ջերմացված է զգացմունքով, դառնում է ավելի հա մոզիչ...»:

Տեմպի արագացումը կամ դանդաղեցումը, ձայնի բարձրացումը կամ իջեցումը, կարճատև դադարը, հեգնանքը, հիացմունքը բարձրացնում են խոսքի բովանդակության մատչելիությունը: Ուսուցչի բանավոր խոսքը ձևավորում է սովորողների խոսքի կուլտուրան: Սակայն բանավոր խոսքն ունի իր թերությունները:

Տպագիր խոսքը սովորողները կարդում են տարբեր արագությամբ և ըստ այդմ՝ յուրացնում այն, իսկ բանավորը բոլորի համար հավասար տեմպով է մատուցվում և արագ լինելու դեպքում կարող է յուրացվել ոչ բոլորի կողմից։ Ընթերցելիս աշակերտը չհասկացած հատվածին կարող է մեկ անգամ ևս անդրադառնալ, իսկ լսելիս, կորցնելով շարադրանքի թելը, դադարում է հետևել խոսքին։

2.1. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ, ՀՆԱՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցչի աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով ձեռնարկի յուրաքանչյուր բաժնի «Մեթոդական խորհուրդներ» մասում տրված են համապատասխան խորհուրդներ և ցուցումներ, ներկայացված են վարժությունների կատարման տարբերակներ։

1. Յուրաքանչյուր թեմա ուսուցանելիս առաջարկվում է դասը բաժանել 3 փուլի՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման։

Խթանման փուլ

Նպատակն է՝

ա) ակտիվացնել աշակերտների հիշողությունը, պարզել թեմայի մա սին նրանց ունեցած գիտելիքները,

բ) շահագրգռել և բարձրացնել յուրաքանչյուր աշակերտի ակտիվու– թյունը՝ մասնակցությունը դասապրոցեսին,

գ) ամրապնդել նոր դասանյութի նկատմամբ յուրաքանչյուր աշակեր տի հետաքրքրությունը և խթանել ավելին իմանալու նրա ձգտումը։

Իմաստի ընկալման փուլ

Կարևոր է նոր դասանյութի հաղորդման ընթացքում պահպանել աշա կերտների հետաքրքրվածությունը՝ ճիշտ ընտրելով մեթոդը (բանավոր խոսք, ընթերցանություն, խմբային և անհատական աշխատանք և այլն)։ Մյուս կարևոր խնդիրն է օգնել յուրաքանչյուր աշակերտի վերահսկելու նոր նյութի սեփական ընկալումը։ յուն

Կշռադատման փուլ

Աշակերտը՝ հանրագումարի է բերում նոր տեղեկությունը և գործնա կանորեն յուրացնում՝ սեփականացնում նոր դասանյութը։

Յուրաքանչյուր փուլի համար կան համապատասխան հարցեր և առաջադրանքներ, որոնց վերաբերյալ պարզաբանումներ կտրվեն «Մե թոդական խորհուրդներ» բաժնում։

2. Ներածական դասին ուսուցիչը պարզաբանում է նոր դասընթացի անհրաժեշտությունը։ Նա սովորողների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ պատմության մասին նրանց գիտելիքները համառոտ են։ Այնուհետև ծանոթացնում է դասագրքի բովանդակությանը, առանձին թեմաներին, դասերի կառուցվածքին և մեթոդական ապարատին։

Համաշխարհային պատմության 8–9–րդ դասարանների դասագրքե րի մեթոդական ապարատում ընդգրկված են ժամանակակից ինտերակ տիվ (փոխներգործուն) մեթոդներով աշխատանք պահանջող հարցեր և առաջադրանքներ, որոնք կդյուրացնեն պատմական նյութի ընկալումը, յուրացումը, կխթանեն աշակերտների ակտիվությունը դասաժամին, կնպաստեն նրանց քննական և վերլուծական մտածողության, ինքնու րույն աշխատելու և ստեղծագործելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը, արժեքային կողմնորոշիչների և համակարգի ձևավորմանը։

3. Դասի սկզբում ուսուցիչը զրույցի միջոցով աշակերտներին պետք է հիշեցնի 7–րդ դասարանում անցած նյութը: Զգալով, որ աշակերտների ուշադրությունը կենտրոնացված է, և նրանք պատրաստ են ակտիվորեն մասնակցելու դասին, ուսուցիչը պետք է սկսի հաղորդել նոր դասա նյութը՝ ներկայացնելով դասի թեմայի հանգուցային դրվագները: Նոր նյութն ամրապնդելու և սովորողների վերլուծական մտածողությունը զարգացնելու համար ուսուցիչը անդրադառնում է դասի մեթոդական ապարատին: Այն ընդգրկում է մտապահման, տրամաբանելու, պատճառահետևանքային կապերը վերհանելու, սեփական կարծիքը փաստարկելու և քննարկման հարցեր ու առաջադրանքներ:

4. Պատմական գործիչների, դեմքերի և կարևոր իրադարձությունների վերաբերյալ ուսումնական նյութն ամրապնդելու, ամփոփելու համար առաջարկվում է կիրառել «Հնգյակ» վարժությունը: Այդ վարժության բո վանդակությունը հետևյալն է. աշակերտները խմբերով կամ անհատա պես պետք է գրեն, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացուն բնութագրող 5-տողանոց բանաստեղծություն: Առաջին տողում պետք է օգտագործել նրան վերաբերող մեկ գոյական, երկրորդ տողում՝ նրան բնութագրող երկու ածական, երրորդ տողում՝ նրան բնութագրող երեք մակբայ, չոր րորդում՝ նրա գործունեությանը բնորոշ չորս բայ, իսկ հինգերորդում՝ առաջին տողի գոյականի հոմանիշը:

Խմբային աշխատանքի դեպքում յուրաքանչյուր խումբ ներկայաց նում է իր գրած բանաստեղծությունը: Անհատական աշխատանքի դեպ քում ուսուցիչն առաջարկում է 3-4 աշակերտի ըստ ցանկության ընթեր ցել իրենց գրածը, իսկ մյուսների գրածը փակցնել գրատախտակին (կամ որևէ այլ տեղ), որպեսզի բոլորը ծանոթանան: Լավագույն աշխատանք ները խրախուսվում են և գնահատվում:

5. Դասի կշռադատման փուլի համար խորհուրդ է տրվում կատարել «Խաթարված հերթականություն» վարժությունը, որը կնպաստի աշա կերտների գիտելիքների և կարողությունների զարգացմանը: կա վար ժությունը կատարելու համար ուսուցիչը պետք է նախօրոք պատրաստ վի: Առանձին թղթերի վրա գրվում են

տեքստից ընտրված կարևոր անուններ, փաստեր, իրադարձություններ։ Դրանք խառը հերթականու թյամբ փակցվում են գրատախտակին։ Այնուհետև ուսուցիչը դասարա նից պահանջում է այդ թղթերը դասավորել ըստ ժամանակագրական հերթականության։

6. Խթանման փուլում աշակերտներին ակտիվացնելու և նախկինում ստացած գիտելիքները՝ վերհանելու համար առաջարկվում է կատուարել «Պրիզմա» վարժությունը (5–7 րոպե)։

Պրիզման ևս մտածողության ընթացքը պատկերավոր դարձնելու պարզ ձև է։ Նրա հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, ա կացության, երևույթի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է։ Պրիզման ապա հովում է ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը։ Այն կարելի է կիրառել նաև նյութի ամփոփման փուլում։

«Պրիզմա» վարժությունը կատարելու համար անհրաժեշտ է.

- տալ մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման,որը ենթակա է ուսումնասիրության,
- ճյուղավորել մեկնաբառը, գրանցել մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը,
- ճյուղավորել գրանցված երկու բառերից յուրաքանչյուրը նույն սկզբունքով (այս ընթացքը կարելի շարունակել, սակայն առավել արդ յունավետ է երեք կամ չորս շերտով բացված պրիզման),
- սկսել պրիզման փակելու գործընթացը։ Այս անգամ վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով։ Պրիզման եզրափակվում է վերջնաբառով,
- պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրա– մաբանական կապի բացահայտումն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության

կամ մտքի մեջ: Կարելի է նաև բացահայտել կապը պրիզմայի բոլոր բառերի միջև շարադրության միջոցով: Վերջիններիս կարելի է անդրադառնալ նյութի ամփոփման ժամանակ և ծավալել հանգամանալից քննարկում: Փաստորեն, եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում ակտիվանում է գիտակցական ոլորտը:

T-աձև աղյուսակ: T-աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն ասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Իր ձևով T Խառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանց ում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական լամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննար լումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, ողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձա դանքների գրառման համար:

M-աձև աղյուսակ: M-աձև աղյուսակն արդյունավետ է դասի տարբեր փուլերում խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք արտահայտելու, գրանցելու և դրա հիման վրա քննարկում կազմակերպելու համար: Այն բաղկացած է երեք բաժնից, յուրաքանչյուր բաժնում գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ՝ իրենց տեսակետները հիմնավորելու համար:

Հասկացությունների քարտեզ (մտքերի քարտեզագրում): Քարտեզը սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում ուղեկից հասկացությունները, մտքերն ու գաղափարները: Քարտեզի «Ճյուղերը» տարածվում են նաև ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող» բառի հետ, իսկ միևնույն «ծնողն» ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ՝ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ:

Տրամագիր: Տրամագիրը կարելի է օգտագործել գաղափարները, պատմական երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջա նաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են գաղափարների, երևույթների, անձերի ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում առանձնացվում և շեշտվում են նրանց առանձնահատկությունները: Տրամագիրը կարող է այլ գծապատկերներով հանդես գալ, եթե մտքերի գրառման համար նախատեսված տարածքները չեն բավարարում: Բացի այդ՝ այն կարող է ունենալ նաև բարդ կառուցվածք՝ երեք–չորս հասկացությունների համեմատության համար:

2.2 ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

Ընդհանուր բնութագիրը

Սկզբնաղբյուրներ են համարվում նամակները, լուսանկարները, նկարները, թերթային կամ գիտական հոդվածները, իրերը, պատմական, իրավական փաստաթղթերը, գրական ստեղծագործությունները և այլն: Երկրորդային աղբյուրները սկզբնաղբյուրների վրա հիմնվող գրքերն են, հոդվածները: Օրինակ՝ դպրոցական դասագիրքը երկրորդային աղբյուր է: Բայց դասագրքում կարող են ներառվել սկզբնաղբյուրներ: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնա կան գործընթացն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից: Սկզբնաղբյուրներում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ տարբեր իրադարձությունների ու խնդիրների շուրջ: Այդ հանգամանքը՝ սկզբնաղբյուրները դարձնում է կրթության գործընթացը խթանող միջոց: Մասնավորապես սկզբնաղբյուրների հետ աշխատանքը՝ հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկացնելու հակասությունների և տարաձայնությունների մասին, այլև նրանց մասնակից դարձնելու դրանց

քննարկմանը: Մասնակից դառնալով այդ բանավեճերին՝ աշակերտները հնարավորություն են ստանում ավելի անմիջականորեն և ամբողջականորեն պատկերացնելու քննարկվող նյութը: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքները, հմտությունները, վերլուծական կարողությունները զարգացնելու գործում: Աշակերտները հնարավորություն են ստանում, ուղղակիո րեն առնչվելով նյութին, զարգացնելու զարմանալու ունակությունը, քննադատական մտածողությունը, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու կարողությունը: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որոնք ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունը զարգացնող կարևոր գործիքներ են: Սկզբնաղբյուրների նյութերը կաղապարված, ադապտացված չեն: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողությունը: Շատ հաճախ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք, ինչը սովորողներին շատ քիչ հնարավորություն է տալիս հետազոտական աշխատանք կատարելու:

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը փայլուն հնարավորություն է միջառարկայական կապերը զարգացնելու տեսանկյունից:

Սկզբնաղբյուրների օգտագործումը ուսումնական գործընթացում: Ընտրության չափանիշները

Սկզբնաղբյուրներն ուսուցման գործընթացում արդյունավետ օգտա գործելու համար շատ կարևոր է ընտրության չափանիշներ սահմանելը:

Սկզբնաղբյուրների ընտրության չափանիշներ են համարվում.

Հետաքրքրության աստիճանը: Արդյոք ընտրված սկզբնաղբյուրները աշակերտների հետաքրքրությունների շրջանակում են: Որքանո՞վ են այդ սկզբնաղբյուրները հետաքրքիր, կարևոր, օգտակար, ուսումնասիրվող նյութին համապատասխան:

Սկզբնաղբյուրի բարդության աստիճանը: Որքանով է սկզբ նաղբյուրի բարդության աստիճանը համապատասխանում աշակերտների կարողություններին: Ի՞նչ օգտակար նյութեր կարելի է տալ աշակերտներին սկզբնաղբյուրը հեշտությամբ յուրացնելու համար, օրինակ՝ բառարան, մանրամասներ՝ սկզբնաղբյուրի համատեքստի, ստեղծման նախապատմության մասին:

Ծավալը: Ի՞նչ ծավալ ունի աղբյուրը: Ո՞ր հատվածը պետք է ընտրել սկզբնաղբյուրի
հիմնական գաղափարները հաղորդելու համար:

Տեսակետների բազմազանություն: Նշված թեմայի շուրջ արդյոք կան տարբեր տեսակետներ: Տեսակետների հավասարակշռվածությունը ապահովված է, թե՞ ոչ:

Աղբյուրների բազմազանություն: Արդյոք ընդգրկվել են տարբեր տեսակի աղբյուրներ (տպագիր, անտիպ, տեքստ):

Հասանելիություն: Արդյո՞ք աշակերտները կարող են գտնել աղբյուրները:

Դասի կազմակերպումը

Դասարանում սկզբնաղբյուրների հետ աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

Կազմակերպման ձևերը: Ինչպե՞ս են օգտագործվելու սկզբնաղբ յուրները: Դրանք կարող են լինել քննարկման հիմք, գրավոր աշխատանքի նյութ, բանավոր ներկայացման նյութ, դերային խաղի թեմա:

Դասի ընթացքը: Ինչպե՞ս են աշխատելու աշակերտները՝ անհատական, փոքր խմբերով, թե՛ ամբողջ դասարանով:

Ներկայացման ձևը: Ի՞նչ արդյունք են տալու աշակերտները՝ հարցաթերթիկ, ակնարկ, նկար, ցուցապաստառ, բանավոր ներկայացում:Ինչքա՞ն ժամանակ է տրվելու աշակերտներին յուրաքանչյուր հանձնարարության համար:

Գնահատումը: Ինչպե՞ս են գնահատվելու աշակերտները՝ թեստ, ռուբրիկ:

Եզրակացություն-առաջարկություններ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սովորողի համար ելակետային է համարվում դասագիրքը, ուստի ուսուցման որակի և արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է այն համալրել լրացուցիչ տեղեկատվական նյութերով, վավերագրերով, ուսումնասիրվող ժամանակաշրջանի քարտեզներով և ընթեցանության համար նախատեսված գրականության ցանկով:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել,որ ուսումնական հաստատությունը պետք է համալրված լինի օժանդակ նյութերով, պատկերային, ձայնային, էկրանային ուսուցման միջոցներով:

Օգտագործված գրականության ցանկ

1.Հանրկրթական դպրոցի Համաշխարհային պատմություն առարկայի դասագրքեր՝ 8-րդ դասարան «Նոր դարեր», 9-րդ դասարան՝ «Նորագույն շրջան»:

2. Ա. Ղուկասյան «Ուսուցչի ձեռնարկ», «Համաշխարհային պատմություն 8-9», Երևան 2013թ.

3.Վիկտոր Հյուգո «Թշվառները», Երևան, «Սովետական գրող» հրատարակություն, 1978թ.